



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

11 փետրվարի 2021 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝

Ա. Թունյանի

Ա. Վաղարշյանի

Քննության առնելով «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ն դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունվարի 26-ին)՝ խնդրելով.

« (...) 2. ՀՀ Վճռաբեկ դատարանի 11.03.2020 թ.-ի ՎԴ/12540/05/17 Որոշման մեջ ներառվող «... Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում առկա բողոքարկման համար նախատեսված ժամկետի հաշվարկման սկիզբը 19.12.2019

թվականը համարելու խնդրանքին, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն չի կարող համարվել ժամկետի բաց թողնման պատճառը հարգելի համարելու և բաց թողած ժամկետը վերականգնելու միջնորդություն, քանի որ չի պարունակում բողոք բերած անձի կողմից ակնկալվող գործողությունը հայցելու, այն է՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դատական ակտ կայացնելու պահանջ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձի խնդրանքն ուղղված է դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը որոշելուն, որպիսի հարցը կարգավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և դուրս է դատարանի լուծմանը ենթակա հարցերի շրջանակներից:...» դրույթով տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

3. ՀՀ Վճռաբեկ դատարանի 24.06.2020թ.-ի ՎԴ/12540/05/17 Որոշման մեջ ներառվող «... Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ միջնորդության մեջ ներկայացված փաստարկը ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ չէ, իսկ բաց թողնված ժամկետը վերականգնելու անհրաժեշտության մասին Ընկերության տնօրենը որևէ այլ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության, քանի որ վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:...» դրույթով տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

2. Դիմողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 11-ի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշման արդյունքում խախտվել է Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իր իրավունքը, քանի որ իր կողմից, ըստ էության, ներկայացվել է վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, սակայն Վճռաբեկ դատարանը ձևական

սխալի համար վճռաբեկ բողոքը վերադարձնելու փոխարեն համարել է, որ միջնորդություն չի ներկայացվել և վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

Միաժամանակ, ըստ դիմողի, Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 24-ի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշմամբ տրված որոշ մեկնաբանությունների արդյունքում նույնպես խախտվել է Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իր իրավունքը: Մասնավորապես, դիմողը կարծում է, որ ինքը վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետի բաց թողումը հարգելի համարելու միջնորդությամբ ներկայացրել է բավարար հիմքեր, սակայն վերոնշյալ միջնորդությունը անհիմն մերժվել է, որի արդյունքում խախտվել է Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իր իրավունքը:

**3.** Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

սույն գործով վերջնական դատական ակտը՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, Վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է 2020 թ. հունիսի 24-ին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020 թ. հունիսի 24-ին, Սահմանադրական դատարանի դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը սկսվում է 2020 թ. հունիսի 25-ից և ավարտվում 2020 թ. դեկտեմբերի 25-ին:

Մինչդեռ, «ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի դիմումը փոստային բաժանմունքին է հանձնվել 2021 թվականի հունվարի 23-ին: Հետևաբար՝ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու համար:

Ինչ վերաբերում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմողի միջնորդությանը, Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ի տարբերություն քաղաքացիադատավարական, վարչադատավարական և քրեադատավարական օրենսդրության՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը Սահմանադրական դատարանի դիմելու բաց թողնված ժամկետը վերականգնելու ինստիտուտ չի նախատեսում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 3 և 5-րդ մասերով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

«ՏԱԹԵՎԻԿ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝  
Անդամներ՝



Ա. Խաչատրյանի  
Ա. Թունյանի  
Ա. Վաղարշյանի

11 փետրվարի 2021 թվականի  
ՍԴԴԿՈ-9